

**«Ներդաշնակ հասարակություն»
Սոցիալական աշխատողների ասոցիացիա, ՀԿ
Գործունեության հաշվետվություն
2010-2011թթ**

Նախաբան

Կազմակերպության 20.03.2006թ. ընդհանուր ժողովում հաստատված Ասոցիացիայի Կայացման ռազմավարական ծրագրի (2007-2011թթ) հիմնական ուղղությունների համաձայն, կազմակերպության նշված տարիների գործունեության առանցքը կազմել են.

- Ասոցիացիայի անդամների հետ աշխատանքը
- Ադոկացիոն գործունեությունը սոցիալական աշխատանք մասնագիտության կայացման նպատակով
- ՀՀ-ում սոցիալական քաղաքականության բարեփոխումներին խորհրդատվական-փորձագիտական աջակցությունը:

Ի լրումն նշված հիմնական ուղղությունների, ակտիվ գործունեություն է ծավալվել նաև ասոցիացիայի միջազգային ճանաչման, Հայաստանում սոցիալական աշխատանքի սեփական դպրոցի հաստատման վերաբերյալ միջազգային իրազեկման ուղղությամբ:

Ասոցիացիայի անդամների հետ աշխատանքը

Հաշվետու ժամանակահատվածի համար անդամների պատասխանատվության բարձրացման հարցը համարվել է անդամների հետ աշխատանքում հիմնական շեշտադրումը: Մինչ այդ վարչության անդամների աշխատանքի հիմնական առանցքը կազմում էր պոտենցիալ թեկնածուներին քաջալերելը՝ անդամակցելու ասոցիացիային, և հաշվի առնելով սոցիալական ոլորտի, հատկապես պետական սոցիալական ծառայությունների աշխատակիցների ցածր աշխատավարձը՝ պահանջ չի դրվել անդամավճարի կամ այլ պատասխանատվությունների: Վարչությունը գտնում է, որ այդ փուլն արդեն հիմնականում հաղթահարված է, և թե անդամների, թե կազմակերպության շահերից է բխում անդամների պատասխանատվության աստիճանաբար բարձրացումը: Մասնավորապես, անդամների համար ասոցիացիային անդամակցելը պետք է ունենա որոշակի պայմաններ, այն է՝ անդամավճարների մուծում, հավաքներին, ժողովներին, կազմակերպության նախաձեռնած միջոցառումներին անձամբ մասնակցություն, անհրաժեշտության դեպքում հաղորդակցման որևէ միջոցով (էլեկտրոնային փոստ, հեռախոս և այլն) կարծիքի տրամադրում: Սրանք այն

«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Ասոցիացիա

նոր պայմաններն են, որոնք պետք է ավելացվեն ընդհանուր ժողովի կողմից անդամակցելու պայմաններին (էթիկական կոդեքսի ընդունում, սոցիալական աշխատանքի արժեքների հանդեպ հարգանք):

Ըստ այդմ, վարչությունը հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստական աշխատանքներ է սկսել իրականացնել անդամների հետ, «փորձարկել» վերը նշված նոր պայմանների՝ անդամների կողմից ընդունելու հնարավորությունը, բացահայտել դրա խոչընդոտներն այնպես, որ ներկա Ընդհանուր ժողովին հաստատման ներկայացնի նոր պայմանները, և անդամակցության կարգը վերանայվի: Վարչությունը զեկուցում է, որ նախապես սահմանված 5.000, 3.000 և 1.000 դրամ տարեկան անդամավճարի չափը դրամատիկ կերպով չի բավարարում կազմակերպության նվազագույն կենսունակությունը ապահովելու համար: Կարևոր է ընդգծել, որ ասոցիացիայի կողմից կազմակերպվող գրեթե բոլոր միջոցառումների համար ստիպված ենք դիմել տարբեր անհատների, դոնորների, երբեմն էլ կառավարությանը, որպեսզի կամ դրամական աջակցություն ցուցաբերեն, կամ պարզապես անվճար տրամադրեն տարածք և այլն: Մի կողմից դա լավ համագործակցության նշան է, անգամ առաջին հայացքից ոգևորող, մյուս կողմից պետք է ընդգծել, որ դա սահմանափակում է կազմակերպության ինքնուրույնությունը: Բացի այդ, եթե միջոցառումների համար որոշակի միջոցներ հայթայթել հնարավոր է, ապա քարտուղարությանը սատարելու համար գումար գտնելը շատ ավելի բարդ է, համենայն դեպս, մեզ դա կազմակերպել դեռևս չի հաջողվել: Սա նշանակում է, որ ամբողջ վարչությունը գործում է կամավորական հիմունքներով, որը մի կողմից նորմալ է և ոգևորող, մյուս կողմից, մարդկանց՝ ժամանակ առ ժամանակ զբաղվածության, վարձատրվող այլ աշխատանքներում ներգրավված լինելու պատճառով նվազում է ասոցիացիային ժամանակ տրամադրելու հնարավորությունը, ինչու չէ նաև նվիրվածությունը: Մրանք խնդիրներ են, որոնք լուծում են պահանջում, ուստի, ինչպես և ասոցիացիաների դասական մոդելի պարագայում, մեր ասոցիացիան նախ և առաջ պետք է կենսունակ դառնա անդամների անդամավճարի հաշվին, ապա փնտրի լրացուցիչ միջոցներ՝ ընդլայնվելու և ավելի խոշորամասշտաբ գործունեություն ծավալելու համար:

Կարևոր եմ համարում ընդգծել, որ այս երկու տարիների ընթացքում մեզ հասկանալի է դարձել, որ հայտնվել ենք փակ շղթայում, երբ քննարկվում է անդամների կողմից ներդրումներ կատարելու հարցը: Մի կողմից ասոցիացիան չի կարողանում իր պարտականությունները լիարժեք կատարել, քանի որ ռեսուրսներ չունի, օրինակ, թերթ տպագրելու, սոցիալական ոլորտի իրավիճակի, ռեֆորմների վերաբերյալ կանոնավոր տեղեկատվություն տրամադրելու անդամներին, կլինիկական աշխատողների համար սուպերվիզիոն խորհրդատվություններ կազմակերպելու, պայքարելու սոցիալական

«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Ասոցիացիա

աշխատողների իմիջի, աշխատավարձի, աշխատանքային պայմանների բարելավման համար, և այլն, որոնք անդամների սպասումներն են ասոցիացիայից, մյուս կողմից, անդամները պատրաստ չեն ավելացնելու անդամավճարը, որպեսզի բավարարեն իրենց սպասումները: Ստացվում է փակ շղթա, որը ասոցիացիայի համար նշանակում է ճգնաժամ, եթե, իհարկե, պայմանները չփոխենք: Ես խորհրակցել եմ որոշ երկրների ասոցիացիաների ներկայացուցիչների հետ և պարզել, որ նման կազմակերպչական ճգնաժամեր տեղի են ունեցել գրեթե բոլոր ասոցիացիաներում, և միայն հավասարակշռված, կշռադատված, լավ հաշվարկված անդամավճարի սահմանումն է թույլ տվել հաղթահարել ստեղծված իրավիճակը: Ներկայացնելով Ձեզ այս հաշվետվությունը՝ ես լիահույս եմ, որ փորձագետների օգնությամբ մենք կկարողանանք այդ հավասարակշռված հաշվարկը կատարել այնպես, որ ընդունելի լինի ինչպես ժողովի, այնպես էլ յուրաքանչյուր անդամի կողմից՝ հաշվի առնելով, որ ՀՀ-ում, իսկապես, օբյեկտիվորեն ցածր է սոցիալական աշխատողների աշխատավարձը: Մեր հաշվարկը պետք է լինի ապահովելու նվազագույնը՝ քարտուղարություն, անդամների հետ կապի և զարգացման ծրագրերի մասի ապահովում այնպես, որ ասոցիացիան կարողանա ավելի լայնածավալ գործունեություն իրականացնել: Ուստի, հաշվի առնելով, որ ունենք լիիրավ 200 անդամ, պետք է սահմանենք ընդունելի անդամավճար:

Անդրադառնալով սոցիալական անդամներին մատուցած ծառայություններին, պետք է զեկուցեմ, որ մոտ 56 սոցիալական աշխատող ստացել է անհատական խորհրդատվություն՝ իրենց կողմից վարվող դեպքերում ավելի հաջող ելք ապահովելու համար: Համագործակցելով տարբեր կազմակերպությունների հետ՝ WV, UNICEF, հնարավոր է դարձել, ի լրումն այդ կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող վերապատրաստման դասընթացի, սոցիալական աշխատողների համար խմբային խորհրդատվություն և խմբային սուպերվիզիա կազմակերպել: Մեր առաջարկը այդ կազմակերպությունների կողմից ընդունվել է ադեկվատ կերպով, ուստի վերապատրաստման դասընթացներից հետո 1,5-2 ժամ տրամադրվել է նշված գործընթացներին, ինչի արդյունքում ավելի քան 140 սոցիալական աշխատողներ անցել են այդ փուլով: Պետք է նշել, որ նրանց մեծ մասը կամ համակիր անդամ էին, կամ ընդհանրապես չէին լսել ասոցիացիայի մասին, ինչը մյուս կողմից հնարավորություն տվեց նրանց մտածելու ասոցիացիայն անդամագրվելու մասին: Երևանի պետական համալսարանում կազմակերպված անդամ ուսանողների ուժերով ոչ անդամ ուսանողների համար տեղեկատվության փոխանցման և սոցիալական աշխատանքի արդի խնդիրների քննարկմանը նվիրված միջոցառումը նույնպես իր կարևոր դերը խաղաց ապագա մասնագետներին կողմնորոշելու հարցում: Բովանդակալից այդ հանդիպման կազմակերպման համար մեծ շնորհակալություն եմ հայտնում մեր կամավորների հետ աշխատանքի համար պատասխանատու Կարո Գևորգյանին, և նրան աջակցած մագիստրանտներին:

«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Ասոցիացիա

Ադվոկացիոն գործունեությունը սոցիալական աշխատանք մասնագիտության կայացման նպատակով

Կամավորների հետ աշխատանքի պատասխանատուները հետաքրքիր այլ գործեր են նաև կազմակերպել, մասնավորապես, սոցիալական աշխատողի իմիջի վերաբերյալ սիրողական տեսահոլովակ, վիդեո - հարցազրույց, ինտերնետից դուրս են բերել ամենահետաքրքիր ասույթները սոցիալական աշխատանք մասնագիտության և մասնագետների վերաբերյալ և այլն, այս ամենը անշուշտ նպաստում է մասնագիտության ադվոկացիային:

Մասնագիտության և մասնագետների շահերի պաշտպանության համար օգտագործվում է յուրաքանչյուր պատեհ առիթ: 2010, 2011 թթ –ին Նոյեմբերի 4–ի՝ սոցիալական աշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպվել են մեկօրյա կոնֆերանսներ: Դրանք պետք է համարել հաջողված միջոցառումներ այն տեսակետից, որ համագործակցելով ԱՍՀՆ – ի հետ, հաջողվել է կոնֆերանսին մասնակից դարձնել բավական մեծ թվով մասնագետների: Ընդհանուր առմամբ, երկու միջոցառումներին ներկա են եղել մոտ 300 մասնագետներ: 2010թ –ի կոնֆերանսին ԱՍՀՆ նախարարը նաև պատվոգրեր ու պարգևատրումներ հանձնեց ոլորտի լավագույն աշխատակիցներին: Այդ հին ու բարի ավանդույթը մի կողմից հին ժամանակներն են հիշեցնում, մյուս կողմից սոցիալական աշխատողների աշխատանքի գնահատումը նախարարի մակարդակով ոգևորիչ է: Կոնֆերանսներին ասոցիացիան հանդես է եկել սոցիալական աշխատանքի և մասնագիտության և մասնագետների արդի խնդիրների վերաբերյալ ներկայացմամբ, բարձարաձայնվել են ախատավարձի, աշխատանքի պայմանների, մասնավորապես սոցիալական աշխատողների ծանրաբեռվախությունը նորմավորելու և նվազագույն չափանիշերը սահմանելու անհրաժեշտությունը:

2011 թ կոնֆերանսին, ասոցիացիայի կամավոր աշխատաքնային խմբի անդամները, ովքեր մանրամասն աշխատել էին մոտ երկու տարի՝ Սոցիալական աջակցության մասին՝ օրենքի փոփոխությունների նախագծի վրա, ներկայապատեց կոնֆերանսին, ինչը մեծ հետաքրքրություն առաջացրեց բոլոր երկանների շրջանում, իսկ որոշումներ ընդունողները, մասնավորապես Ազգային ժողովի Սոցիալական հարցերի հանձնաժողով նախագահ պրն Հ, Հակոբյանը շնորհակալություն հայտնեց իրենց գործը հեշտացնելու համար և խնդրեց փոխանցել այդ առաջարկությունների փաթեթը:

2010 թ ապրիլին 2011թ հոկտեմբերին այդ առաջարկությունների տարբեր տարբերակները ներկայացվել են նաև ԱՍՀՆ մասնագետների մասնակցությամբ Հանրային խորհրդի Առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի նիստին, որը բուռն

«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական Միություն

քննարկումների տեղիք է տվել: Պետք է նշեմ, որ Հանրային խորհրդի շատ անդամների համար նորություն էր Սոցիալական աշխատանքը և նրանք առաջին անգամ էին լսում:

Հաշվետու ժամանակահատվածում WV-ի ֆինանսավորմամբ մասնագիտության և մասնավորապես համայնքային սոցիալական աշխատանքի հանրային իրազեկման աշխատանքներ էին ծավալվել: Նրանց հրավերով ես և Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ պրոֆ. Արտակ Խաչատրյանը մասնակցեցինք Կենտրոնի հեռուստաընկերության ‘Ուվագիծ’ հաղորդաշարին՝ ներկայացնելով մասնագիտության առանձնահատկությունները՝ հնարավորինս մատչելի լեզվով: Բացի այդ, նույն ծրագրի շրջանակներում հանրապետության գրեթե բոլոր մարզերում տեղի են ունեցել հանդիպումներ, որտեղ ծառայությունների մատուցողների և քաղաքականություն իրագործողների՝ որոշումներ ընդունողների մասնակցությամբ ներկայացվել է թե ինչ կարելի է սպասել համայնքային սոցիալական աշխատողից, ինչ կարող է ավելացնել նա համայնքում, ինչպես կարող է համագործակցել արդեն գործող մասնագետների հետ, որն է նրա դաշտը և այլն: Լինելով շատ նորարարական, համայնքային սոցիալական աշխատանքի ինստիտուտը դեռ երկար լոբբինգի կարիք ունի, որպեսզի տեղավորվի գործող պրակտիկայում:

Ինչպես հիշում եք, վարչության նիստում հավանության է արժանացել մասնագիտության ադվոկացիային և մասնագետների շահերի, ինչպես նաև առաջին հերթին շահառուների շահերի պաշտպանությանն ուղղված նաև անուղղակի հնարավորություններին աջակցելը: Այդպես, ասոցիացիայի նախաձեռնությամբ, 2010թ –ին պաշտոնապես գրանցվեց երեխաների և ընտանիքների պաշտպանությամբ զբաղվող հկ և բարեգործական կազմակերպությունների ցանցը, որին անդամակցում է նաև ասոցիացիան: Ցանցի նպատակն է բարելավել երեխաներին/ընտանիքներին մատուցվող ծառայությունները, բացառել վերաձայնակերը, պաշտպանել երեխաների/ընտանիքների շահերը, բարեավելլ այդ ոլորտին վերաբերող օրենսդրությունը, միացնել ձայները՝ ի պաշտպանություն երեխաների և ընտանիքների իրավունքների պաշտպանության: Հաշվի առնելով, որ նման մանդատը ամբողջովին ‘սինեթի’ էֆեկտ կարող է առաջացնել սոցիալական աշխատողների կողմից արդեն գործադրվող ջանքերին, ասոցիացիան ամենակտիվ մասնակցությունն է բերում ցանցի կայացման աշխատանքներին: Բացի այդ, անուղղակիորեն, ցանցի հանդիպումների ամանկ, բարձրացվում թե՛ ծառայությունների մատուցման ստանդարտների, սկզբունքների, մասնագտական մոտեցումների հարցերը այնպես, որ ոլորտում գործող մասնագետները միասնական տեքստային փոխանակության անցնեն, խոսեն նույն լեզվով, որ, վերջապես հումանիտար օգնության փուլից անցում կատարվի մարդկանց օգնելու, մարդկանց կյանքը փոխելու նոր փուլին, ինչը նույնպես իվերջո ծառայում է մասնագիտության սկզբունքների արմատացմանը մեր երկրում: Այս աշխատանքները շարունակական են և ասոցիացիան պատրաստվում է

«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Ասոցիացիա

համագործակցել արդեն գործող այլ ցանցերի հետ՝ հաշմանդամների շահերի պաշտպանությամբ զբաղվող, հոգեկան առողջության հիմնախնդիրներով զբաղվող, տարեցների հիմնախնդիրներով մտահոգ ցանցերի հետ և այլն:

ՀՀ-ում սոցիալական քաղաքականության բարեփոխումներին խորհրդատվական-փորձագիտական աջակցությունը

Ինչպես գիտեք, բազմաթիվ պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ, ցանկացած հնարավորություն օգտագործվում է խոսելու, բացատրելու որոշումներ ընդունողներին այն անհրաժեշտ քայլերի վերաբերյալ, որոնք կօգնեն բարելավել ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգը, ինչը կօգնի ծառայություններ ստացողներին ավելի որակյալ ծառայություններ մատուցել և բավարարել նրանց կարիքները՝ հիմնված նրանց բավունքների հանդեպ հարգանքի սկզբունքի վրա: Ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ նախարարության մի շարք ունեցողներ ընդունողների հետ մենք միանման չենք մտածում և պայքար է սկսված: Բլոր պատճառաբանությունները՝ ֆինանսական ռեսուրսների բացակայության վերաբերյալ մեզ թվում են անհիմն, քանի որ ներկայիս սոցիալական ոլորտում իրականացվող շատ ծախսեր պարզապես չպատճառաբանված են և գալիս են իներցիայի ուժով: Բազմաթիվ կլոր սեղանների, քննարկումների ժամանակ մենք բարձրաձայնել ենք մեր տեսակետը, մասնավորապես իսրտիտուցիոնալ խնամքի ներքո գտնվող երեխաների իրավիճակի վերաբերյալ և բուռն պայքարի մեջ ենք մտել այդ համակարգի պահպանմամբ շահագրգիռ համապատասխան պատասխանատուների հետ: Մեզ շատ աջակցում է Մակ-ի մանակական հիմնադրամը, որի պատվերով 2010թ-ին ասոցիացիա իրականացրել է Մանակական խնամակալական հաստատությունների արագ գնահատում, որի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացված է բաժանված նյութերում: Այդ հաշվետվությունը պարզ վկայում է ոլորտում առկա աբսուրդ շատ հարցերի մասին, որոնք շտկման ենթակա են: Առաջարկությունները, որոնք բերված են հաշվետվության վերջին մասում, նույնպես առաջ են բերել որոշումներ ընդունողների դժգոհությունը, սակայն շատ հույս ունեն, որ շուտով կհասնենք փոխըմբռնման:

Անհարժեշտ եմ համարում ընդգծել նաև մեկ այլ ծոշոր ծրագրի մասին, որը սկսել ենք Հմաաշխարհային Բանկի և ԱՍՀՆ –ի հետ համագործակցաբար. խոսքը վերաբերում է Համալիր սոցիալական ծառայությունների տրամադրման համար սոցիալական ծառայությունների և կառուցվածքա-գործառնության մոդելի փաթեթի մշակմանը, որը որին մասնակցելը արժանացել է վարչության հավանությանը: Արդեն իսկ ավարտվել է մոդելի մշակումը և նրա երրեք տարբերակների նմուշները կցված են բաժանված նյութերին: Անշուշտ

«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Ասոցիացիա

Պժվար է ասել, թե քանի-քանի հանդիպումներ, քննարկումներ, վեճեր են ընթացել այս մոդելների մշակման ընթացքում, որոնք նույնպես ծառայել են սոցիալական աշխատանքի տեսակետից խնդիրները հասկանալու և պնդելու վրա, մի գործընթաց, որին նախարարության պաշտոնյաների մասնակցությունը թույլ տվեց ավելի լրջորեն ընդունել սոցիալական աշխատանքի գաղղափաները:

Դժվար է ասել, թե կառավարությունը որ մոդելը կընդունի, ինչպես կշարժվի քանի որ մոդելներից ամենահիմնարարը ենթադրում է քաղաքական որոշումների ընդունում, ուստի Պժվար է կանխատեսել ճակատագիրտ, սակայն ասոցիացիան այս առիթը օգտագործեց ՀՀ-ի սոցիալական ծառայություններին սոցիալական աշխատանքի պահանջներ առաջադրելու համար և մասնագիտության լրջության հետ հաշվի նստելու համար: Պետք է խոստովանել, որ բվերջնանպատակը մարդկանց որկայալ և էֆֆեկտվ խառայությունների մատուցումն է: Այդ ծրագիրը շարունակական է, ծրագրում ընդգրկված են ասոցիացիայի 11 փորձագետներ:

Այլ հարցեր. Ասոցիացիայ նախագահը և քարտուղարը մասնակցել են ինչպես պատվիրակների IFSW_Europe ժողովին, այնպես էլ ENSACT ժողովին՝ ներկայացնելով ասոցիացիան: Այդ ուղևորություններին աջակցել է Մակ-ի մանկական հիմնադրամը և Հայ օգնության Ֆոնդը:

Ես փորձեցի ներկայացնել ա սոցիացիայի երկու տարվա առավել կարևոր գործունեության ոլորտները: Ավելին է արվել, քան ներկայացվեց: Պատրաստ եմ պատասխանել Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերին:

Շնորհակալություն

Շնորհակալություն

«Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիայի
նախագահ

Միրա Անտոնյան